ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 63 09 մայիսի 2011թ.

ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանին հատկացված պահպանման ծախսերի տնտեսագիտական դասակարգման N 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով ու <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով մարզի սոցիալապես խիստ կարիքավոր 42 (քառասուներկու) քաղաքացիների դիմումները

որոշում եմ՝

1. Հատկացնել դրամական օգնություն՝ գումարով 1100000(մեկ միլիոն հարյուր հազար)դրամ մարզի սոցիալապես խիստ կարիքավոր քառասուներկու քաղաքացիների՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ. Հայրապետյանին՝ սահմանված կարգով կատարել վճարումը:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ